ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն № 20-Ա

ք. Երևան «14» ապրիլի, 2017 թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետը, ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կանոնադրության 12-րդ կետի 4-րդ ենթակետը և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 2016 թվականի ապրիլի 8-ի N16-Ա հրամանի 1-ին կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների նախագծերի մրցույթներին ներկայացված հայտերի գնահատման նպատակով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհուրդների (այսուհետ՝ խորհուրդ)՝

1) անդամների վարձատրությունը հաշվարկել՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$ԱՎ = \frac{ՀԹ \times 12000}{ԱԹ}$$

2) նախագահների վարձատրության չափը հաշվարկել՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$ՆՎ = ԱՎ \times 1.2$$

որտեղ՝

ԱՎ - խորհրդի անդամի վարձատրության չափը՝ ՀՀ դրամով, ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները,

ՀԹ - փորձաքննության ենթարկված հայտերի թիվը,
ԱԹ - խորհրդի անդամների թվաքանակը,
ՆԿ - խորհրդի նախագահի վարձատրության չափը՝ ՀՀ դրամով, ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ